

1952 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 23-Ի ԵԳԻՊՏԱԿԱՆ
ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԵՐԸ

Ինչպես յուրաքանչյուր երկրի, այնպես էլ Եգիպտոսի պատմության մեջ այնպիսի իրադարձություններ են տեղի ունեցել, որոնք էապես շրջել են նրա պատմական ընթացքը: Այդ իրադարձություններին բնորոշ են տնտեսական ու քաղաքական ցնցումները, հասարակական հարաբերությունների փոփոխությունները: Դրանք իրենց անդրադարձն են ունենում պետության ինչպես հիմնական բնակչության, այնպես էլ փոքրամասնություն կազմող քաղաքացիների վրա: Եգիպտահայերը դարեր ի վեր ճակատագրով կապված են եղել Եգիպտոսի հետ, և այնտեղ այս շրջանում ընթացող բոլոր վայրիվերումները զգում էին իրենց վրա: Նրանք դարձել էին երկրի անբաժանելի մասնիկը, և իզուր չէ, որ այլ փոքրամասնությունների հետ միասին Եգիպտահայերը ստացել են *մութամասիիին* (Եգիպտականացածներ) անվանումը:

Մերձավոր Արևելքում նոր թափ ստացած ազգային-ազատագրական պայքարն իր արտահայտումը գտավ նաև Եգիպտոսում: Այնտեղ ծայր առած հակաբրիտանական դրսևորումները, որոնք ուղեկցվում էին Եգիպտոսի ոչ մուսուլման բնակչության դեմ բացասական վերաբերմունքի արտահայտություններով, կոչված էին բարձրացնելու ժողովրդականության գաղափարը: Եգիպտական իշխանությունների կողմից 1947թ. ընդունվեց ձեռնարկությունների մասին թիվ 132 օրենքը, որն ուղղված էր ազգային կապիտալի ու աշխատավորության դիրքերի ամրապնդմանը¹: Օրենքը սահմանում էր, որ Եգիպտոսում գրանցված բոլոր ձեռնարկությունների պաշտոնյաների 75, աշխատավորների 90 և ֆինանսական միջոցների 51 տոկոսը պետք է Եգիպտական լինեն, ինչը մեծ վնաս հասցրեց փոքրամասնություններին:

Եգիպտոսում քաղաքացիության մասին օրենքը հիմնված էր Օսմանյան կայսրության օրենսդրության վրա: 1929 թ. փետրվարին ընդունված թիվ 19 օրենքով սահմանվում էր, որ «Օսմանյան կայսրության այն քաղաքացիները, որոնք 1914թ. նոյեմբերի 5-ից մինչև ներկա օրենքի ընդունման պահը մշտապես բնակվել են Եգիպտոսում, ունեին բոլոր իրավունքները համարվելու Եգիպտոսի քաղաքացիներ»²: Պետք է նշել, որ փոքրամասնությունների ներկայացուցիչներից միայն ղպտիներն ու սիրիացիներն էին, որ այս ժամանակահատվածում ընդունել են Եգիպտոսի հպատակություն և չտուժեցին

սահմանափակումներից, իսկ մյուսները՝ այդ թվում նաև հայերը օտար երկրների քաղաքացիներ էին և 1947 թ. օրենքը հենց վերջիններիս էր վերաբերվում:

Եգիպտոսում քաղաքական ճգնաժամը խորացավ 1952թ. հունվարի 26-ին Կահիրեում տեղի ունեցած դեպքերի հետևանքով, երբ հակաբրիտանական ցույցերից մեկի ժամանակ հրի մատնվեցին բազմաթիվ շինություններ, որոնք գործում էին ի շահ անգլիական և օտարերկրյա գերիշխանության³: Հարձակման զոհ դարձան նաև փոքրամասնությունները, և հերթական անգամ ավերվեց «Սիկուրեյ» հազուստի ու կտորեղենի խանութը: Այդ օրը Եգիպտոսի պատմության մեջ մտավ «Ան շաբաթ» անվանումով: Երկրում սկսվեց քաղաքական քաոս, որի արդյունքում 1952թ. հունվարից մինչև 1952թ. հուլիսյան հեղափոխությունը Եգիպտոսը հինգ կառավարություն փոխեց:

1952թ. հուլիսի 23-ի առավոտյան ժամը 7-ին Կահիրեի ռադիոն հայտարարեց, որ երկրում հեղափոխություն է իրականացվել «Ազատ սպաներ» կազմակերպության կողմից⁴:

Հայերը, բնությով լինելով ազատատենչ ժողովուրդ, մասնակցել են Եգիպտոսի ժողովրդական բոլոր ցույցերին: Նրանք առաջիններից էին, որ ողջունեցին հուլիսի 23-ի հեղափոխությունը, և երկրի վերակազմակերպման գործում Աբդալ Նասերի ու նրա կողմնակիցների ջատագովն էին⁵: Սակայն հեղափոխությունից հետո դժվար պայմաններ ստեղծվեցին Եգիպտահայության համար: 1952 թ. սեպտեմբերի 9-ին կառավարությունը հայտարարեց հողային բարեփոխում անցկացնելու մասին իր որոշումը: Այն խոշոր հողատիրությունը սահմանափակում էր 200 ֆեդդանով, երեխաներ ունեցող հողատերերին թույլատրվում էր ևս 100 ֆեդդան ունենալ⁶: Բարեփոխումների հիմնական նպատակն էր ծառայել հարուստ հողատերերի տնտեսական և քաղաքական ազդեցության թուլացմանը, հաստատել սոցիալական արդարություն, հողատարածքների հավասարաչափ բաշխում⁷: Այս բարեփոխումը Եգիպտահայերի վրա ևս անդրադարձավ, քանի որ 1949թ. տվյալներով նրանց մեծ մասի հողատարածքները գերազանցում էին թույլատրելի չափերը⁸:

Այս շրջանում Եգիպտոսի կենսամակարդակը ամենացածրերից մեկն էր աշխարհում: Եկամուտները խիստ անհավասարաչափ էին բաշխվում, օրինակ, 1955 թ. ազգային եկամուտի 55 տոկոսը տնօրինվում էր բնակչության միայն 20 տոկոսի կողմից⁹: Տնտեսական անկումից դուրս գալու միակ ելքը օտարերկրյա ֆինանսական միջոցներ զրավելն էր: Այս նպատակով վերամշակվեց 1947թ. թիվ 132 օրենքը, ըստ որի օտարերկրյա կապիտալը կարող էր տնօրինել համատեղ ձեռնարկությունների 49 տոկոսը, ինչի արդյունքում հնարավորություն էր ստանում վերահսկել դրանք¹⁰։ Ապա չեղյալ հայտարարվեց 1948թ. ընդունված հանքարդյունաբերական ձեռնարկությունների մասին

օրենքը, ըստ որի այդպիսի գործունեությամբ զբաղվող բոլոր հաստատությունները, ներառյալ նաև քարոյունահանող, պետք է վերածվեն եգիպտական¹¹: 1952թ. նախարարների խորհրդի հրատարակած որոշման համաձայն տաս տարվա բնակության թույլտվություն էր տրվում եգիպտոսում ծնված և առանց ընդհատումների այստեղ բնակվող քաղաքացիներին, 20 տարվա՝ օրինականորեն երկիր մուտք գործողներին, և 5 տարվա՝ երկրում 15 տարի անընդհատ բնակվող ու պետության համար գիտական, մշակութային կարևորություն ներկայացնող օտարահպատակներին¹²: Փոքրամասնությունների, այդ թվում նաև հայկական համայնքի համար, որոնց գործունեությունը եգիպտոսում նախկին իշխանությունների եգիպտականացման քաղաքականության հետևանքով սահմանափակվում էր, այս նոր միջոցառումների արդյունքում, գործունեության լայն դաշտ էր տրամադրվում:

Երկրում նկատվում էր տեխնիկական ու վարչական կարողություններ ունեցող մասնագետների պակաս, և դա, ինչպես անցյալում, լրացվում էր փոքրամասնություններով¹³: Արդյունքում սկսվեց վերջիններիս շահագրգռելու քաղաքականություն: Հայ համայնքը բացառություն չէր, ինչի ապացույցը եղավ այն, որ Մուհամմեդ Նագիբը՝ իբրև երկրի նախագահ, իր առաջին այցելություններից մեկը կատարեց հայկական առաջնորդարան¹⁴:

Թվում էր, թե եգիպտոսի հայ համայնքը պետք է նորից վերականգներ իր երբեմնի արտոնությունները, սակայն տեղի ունեցավ հակառակը: «Ազատ սպաների» մեջ ի հայտ եկան տարածայնություններ: Մուհամմեդ Նագիբը և իր կողմնակիցները պնդում էին, որ պետք է երկրում հաստատել սահմանադրական կարգեր, վերականգնել կուսակցությունների գործունեությունը և աստիճանաբար ետ քաշվել քաղաքական ասպարեզից: Սյուս թևը՝ հեղափոխության առաջնորդ «Ազատ սպաներ» կազմակերպության ղեկավար Գամալ Աբդել Նասերի գլխավորությամբ, պնդում էր՝ իրենց ձեռքում պահել իշխանությունը, որը նախկինում կոռումպացված էր և ոչ պատշաճ: Պայքարն ավարտվեց Նասերի հետևորդների հաղթանակով: 1954թ. նոյեմբերի 14-ին նախագահ Նագիբը հեռացվեց, և իշխանության գլուխ անցավ Նասերը¹⁵, որն իր գաղափարներով ու գործունեությամբ նոր էջ բացեց ինչպես եգիպտոսի, այնպես էլ եգիպտահայ համայնքի պատմության համար: Վերջինս հատկապես տուժեց Նասերի կողմից արաբականության գաղափարախոսության դիրքերի ամրապնդմանն ուղղված գործունեությունից: 1956 թ. եգիպտոսում ընդունվեց նոր սահմանադրություն, որի առաջին հոդվածում գրված էր. «Եգիպտոսը ինքնիշխան արաբական պետություն է, այն ժողովրդավարական հանրապետություն է, իսկ եգիպտոսի ժողովուրդը արաբական ազգի անբաժանելի մասնիկն է»¹⁶:

Որպես իրենց կեցությունը ապահովող գաղափարախոսություն՝ եզիպտահայերն ընդունում էին եզիպտականացումը, սակայն արաբականացման ընդունմանը նրանք մերժողաբար էին տրամադրված¹⁷:

Այս անցումնային շրջանում եզիպտոսի հայ համայնքի վրա ազդեցություն առաջացնող՝ իշխանությունների կողմից իրականացրած հերթական նորարարություններից էր 1955թ. ընդունված թիվ 462 օրենքը, որով փոփոխվում էր դատական համակարգը: Սույն օրենքը վերացնում էր բոլոր կրոնական դատարանները, և փոխարենը սկսում էին գործել ազգային դատարանները՝ *այ-մահաքիմ ալ-վատանիա*¹⁸: Օրենքի վեցերորդ կետով, եթե դատարան դիմողները պատկանում էին տարբեր կրոնների, հարցը քննվում էր շարիաթի օրենքների համաձայն, և միայն ամուսնության, բաժանման, որդեգրման դեպքերին վերաբերվող խնդիրներն էին շարունակում քննվել դիմողի կրոնական պատկանելության համաձայն: Իսկ իններորդ կետը շարիաթի (մուսուլմանական) նախկին դատարանների բոլոր դատավորներին շնորհում էր ազգային դատարանների դատավորների կոչում, ինչը չէր գործում ոչ մուսուլմանական համայնքների դատավորների համար¹⁹:

Եզիպտահայ համայնքը տուժեց նաև իշխանությունների կողմից կրթական համակարգում կատարած փոփոխություններից: 1955թ. թիվ 583 օրենքը կարևորում էր կրթական հաստատություններում արաբերեն լեզվի գործածությունը և բոլոր դպրոցների՝ ներառյալ մասնավոր դպրոցների, համար պարտադիր դարձնում եզիպտական, արաբական պատմության ու աշխարհագրության քննությունները: 1958թ. ընդունված թիվ 160 օրենքը սահմանում էր, որ բոլոր դպրոցների տնօրենները պետք է արաբ լինեն, ուսուցիչների վարձակալումը, օտար աղբյուրներից դպրոցների ֆինանսավորումը պետք է կատարվեն միայն կառավարության թույլտվությամբ²⁰: Փաստորեն այս կրթական օրենքները նույնպես ուղղված էին եզիպտականացման ու արաբականացման գաղափարներին, և դրանք հայկական դպրոցներում վտանգի տակ էին դնում մշակութային առանձնահատկության պահպանումը:

Եզիպտոսի ղեկավարությունը, շարունակելով ազգայնացման քաղաքականությունը, անդրադարձավ նաև քաղաքացիության խնդրին: 1956թ. ընդունված թիվ 391 օրենքը սահմանում էր, որ եզիպտոսի քաղաքացի են համարվում այն անձինք, որոնք 1900 թ. մինչև օրենքի ընդունման պահը շարունակաբար բնակվել են երկրում²¹: Օրենքը բավականին մեծ խնդիրներ էր առաջացնում քաղաքացիության ընդունման համար: Փաստորեն եզիպտահայերի համար անհնարին էր դառնում երկրից բացակայելը, քանի որ բացակայող քաղաքացիները զրկվում էին հպատակություն ստանալու հնարավորությունից:

Բացի այդ, այն հայերը, որոնք 1900թ. հետո էին հաստատվել Եգիպտոսում, այլևս չէին կարող դիմել քաղաքացիություն ստանալու համար:

1957թ. հունվարին կառավարության հրապարակած օրենքների համաձայն՝ բանկային ու ապահովագրական գործառնությամբ զբաղվողները, ինչպես նաև ձեռնարկությունների արտահանման, ներմուծման և առևտրական ներկայացուցիչները պետք է եգիպտահպատակ լինեին²⁷: Իսկ 1958թ. ընդունված օրենքները սահմանում էին, որ ձեռնարկությունների տնօրենների 51 տոկոսը պետք է Եգիպտոսի քաղաքացիներ լինեն, արաբները դառնում էր տնտեսական գործառնությունների պաշտոնական լեզու²⁸:

Հուլիսյան հեղափոխության՝ եգիպտահայ համայնքին պատճառած անենալուրջ վնասը հասցվեց հոգևոր հաստատություններին պատկանող հողատարածքների (վակֆ) ազգայնացմամբ: 1960թ. քիվ 264 օրենքը սահմանում էր, որ նմանատիպ հողատարածքները չպետք է գերազանցեն 200 ակր ոռոգվող և 200 ակր անմշակ չափաքանակը: Սա բավական լուրջ դժվարություններ ստեղծեց եգիպտահայերի համար, քանի որ հայկական վակֆի վերահսկողության տակ կար շուրջ 2.000 ֆեդդան հողատարածք²⁹, իսկ դրանցից ստացված եկամուտներն ուղղվում էին ոչ միայն առաջնորդարանի և վանքերի, այլև համայնքի դպրոցների, բարեգործական կազմակերպությունների, հիվանդանոցների ֆինանսավորմանը: Այդ իսկ պատճառով հայ համայնքն արտահայտում էր իր մտահոգությունը. «Եգիպտահայ գաղութը պիտի կարենա պահել իր ազգապատկան մշակելի հողերը»³⁰: Հայոց առաջնորդարանը, չնայած առանձին կորուստներին, ստացավ եգիպտական իշխանությունների դրական վերաբերմունքը և կարողացավ պահել այդ հողատարածքների մեծ մասը³¹:

Եգիպտոսի ղեկավարությունը պետության օգտին ևս մի կարևոր քայլ կատարեց, որը մասնավոր սեփականության բռնագրավման քաղաքականությունն էր: Հիմնական գործողությունները ծավալվեցին 1961-1962 թթ.: Հուլիսին ազգայնացվեցին ավելի քան 300 արդյունաբերական, առևտրական, ապահովագրական ընկերություններ և գրեթե ամբողջ բանկային համակարգը³²: Ազգայնացման օրենքները մեծապես ազդեցին նաև եգիպտական բուրժուազիայի վրա: 1961թ. հոկտեմբերին և 1962թ. փետրվարին բռնագրավեցին երկրի 600 մեծահարուստների և փոքրամասնությունների բազմաթիվ ներկայացուցիչների ունեցվածքները, 40 հոգի ձերբակալվեց, շատերն արտաքսվեցին Եգիպտոսից³³: Տուժող մեծահարուստների 1 տոկոսը կազմում էին հայեր³⁴: Այս քաղաքականությունը շարունակվեց նաև հետագա տարիներին:

Լաստերյան արաբականացման քաղաքականությունը անակնկալի բերեց եգիպտահայերին. որոնք մեծ հույսեր էին կապել Եգիպտոսի հետ: Երկրի բոլոր

ուրուտների ազգայնացումը սոցիալական ծանր կացության մեջ դրեց հայ համայնքին։ Մի խումբ հայ գործատերերի համար, որոնք եվրոպական դաստիարակություն էին ստացել և ծանոթ չէին արաբին ու իր մշակութին, դժվար էր ընտելանալը արաբական ոգուն, ինչի պատճառով նրանք վճռեցին մեկնել երկրից։ Արաբական Սիացյալ Հանրապետության (1958-1971 թթ. Եգիպտոսը և Սիրիան միավորվել էին) հեղափոխական կառավարությունը թեև նրանց վրա արգելքներ չդրեց, սակայն նրանք չէին կարող ոչ մեծ քանակությամբ դրան դուրս հանել երկրից, իսկ հանած գումարն էլ պետք է լիներ ամեն տարի մաս-մաս՝

Արդեն 1950-ական թթ. կեսերից եգիպտահայ գաղթօջախն աստիճանաբար սկսեց նվազել, ինչը հետևանք էր երկրում ընթացող քաղաքական ու սոցիալ-տնտեսական գործընթացների և իրար հաջորդող արաբա-խորայեյան պատերազմների։ Թեև այդ գործընթացներն անմիջականորեն հայ համայնքին ուղղված չէին, սակայն երկրից ոչ մահմեդական բնակչության արտագաղթածների թվում գերակշռում էին նաև հայերը, որոնք մեծ խմբերով մեկնեցին ԱՄՆ, Կանադա, Ավստրալիա, Բրազիլիա և այլուր³¹։ Դեռ 1952-1954 թթ. Եգիպտոսում կային 40.000 հայեր³²։ 1950-ականներին, ըստ Ալպոյաճյանի տվյալների, ծառայողները կազմում էին Կահիրեի հայ առաքելական համայնքի զբաղված անդամների 35.6%, արհեստավորները՝ 26.8%, բանվորները՝ 4%, մանր առևտրականները՝ 15%, վաճառականները, ներառյալ սառաֆները՝ 5.8%, կալվածատերերը՝ 1.8%, ազատ ասպարեզում աշխատողները՝ 11%³³։ Թոփուզյանը նշում է, որ այս տվյալները պետք է վերապահությամբ ընդունել, քանի որ բանվոր են համարվել միայն սևագործ աշխատողները, իսկ վարպետների և նրանց կողմից շահագործվող վարձու ենթավարպետների միջև հավասարություն է դրվում, այն ինչ վերջիններս արտադրության մեջ զբաղված իրենց դիրքով բանվորներից չէին տարբերվում³⁴։ Խորհրդային Հայաստանի նախարարների խորհրդի նախագահի տեղակալ Ե. Թ. Ասծատրյանի՝ ԳԿԿ ԿԿ-ի նախագահությանն ուղղված «Հույժ գաղտնի» վերնագրով գրության մեջ բերված տվյալներից ակնհայտ է դառնում, որ միայն 1962-1964 թթ. Եգիպտոսից արտագաղթել են շուրջ 11.000 հայեր³⁵։ Ազգայնացման քաղաքականության և 1956թ. Եգիպտա-խորայեյան պատերազմի հետևանքով Եգիպտոսում 1970-ին մնացել էր մոտ 12.000 հայ³⁶։ Միայն այս շրջանում Եգիպտոսում ստեղծված իրավիճակը չէր հայերի արտագաղթելու պատճառը, այլև նրանց մեջ արմատացած հայրենասիրական գաղափարներն էին, որոնք ստիպում էին հայրենադարձվել։ Հայրենիք մեկնողները հայրենասերներ էին և մեծ մասամբ Եգիպտահպատակություն չունեցող հայեր³⁷։ 1960-ական թթ. կեսերից Եգիպտահայերի հայրենադարձությունը սկսեց պետական օժանդակություն

ստանալ Հայաստանից, որն իրականացվում էր հայրենադարձության լիազոր պատվիրակների գլխավորությամբ: Վերջիններս փորձում էին կազմակերպել սահմանափակ թվով հայրենադարձների տեղափոխումը Հայաստան: Այս սահմանափակումը պայմանավորված էր նրանով, որ հայրենադարձները, առանց ավելորդ դժվարությունների, հայրենիքում գտնեն իրենց գործն ու բնակարանը: Եվ ինչպես կարևորում է «Ջահակիրը». «անհրաժեշտ է համատեղել գաղութի աշխուժացումն ու կրթական միջավայրի բարելավումը կազմակերպված հայրենադարձությանը խթանելու հետ մեկտեղ»³⁶: Հայ համայնքի շահագրգիռ ուժերը ջանք չէին խնայում հետզհետե ուժեղացող արտագաղթը դանդաղեցնելու համար: Ինչպես օրինակ «Արև» թերթի խմբագիր է. Կոտալազյանը խորհրդային Հայաստանի կառավարությանն ուղղված 1965թ. իր դիմումում առաջարկում է «գաղութին անստիճանական ուժաթափումը» և արտագաղթը դանդաղեցնելու նպատակով Հայաստանից պարբերաբար ուղարկել գեղարվեստական համույթներ, նշանավոր գրողներ և արվեստագետներ: Նա համոզված էր, որ նման այցելությունները, գաղութի և հայրենիքի անմիջական «կապերու խորհրդանիշ» հանդիսանալով, կարող են նաև ինչ որ չափով կանխել արտագաղթը³⁷:

¹ Thomas Philipp, *The Copts and Other Minorities in the Development of the Egyptian Nation-State*, տե՛ս Shimon Shamir, *Egypt from Monarchy to Republic: A Reassessment of Revolution and Change*, San Francisco, Oxford, 1995, p. 146.

² Ա. Գրիգորյան, Ստեփանություն, Եգիպտոսի ազգային և կրոնական փոքրամասնությունները (1907-1967 թվականներ), էջ 104:

³ А. Агашишев, Гамаль Абдель Насер, М., 1979, стр. 52.

⁴ Ե. Ա. Արզարյան, «Քաղաքական և սոցիալտնտեսական վերափոխումները եգիպտական հեղափոխության առաջին փուլում», Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ծովափնայիններ, հ. 14, Երևան 1987, էջ 177, «Ազատ սպաների» գործունեության մանրամասները տե՛ս ըսված Լ. Լ., կրճովՍՍՉ ժ. Ծ., ժյուլտպ: ԶՐԿՎ՝ տրվաքՆՊԿՎՅՈ ծՆրաբՐՈ, ԾՏրՍՉՈ, 1981. աշխատության մեջ:

⁵ Արաբ Յեղափոխությունը և հայերը, «Ջահակիր», հինգշաբթի, 22 հուլիսի, 1965:

⁶ Charles Issawi, *Egypt in Revolution: An Economic Analysis*, London, 1963, p. 53.

⁷ Ա. Գրիգորյան, էջ 123:

⁸ Gabriel Baer, *A History of Landownership...*, p. 1.

⁹ P. J. Vatikiotis, *The History of Egypt*, London, 1985, p. 202.

¹⁰ В.А. Луцкевич, Египет в борьбе за экономическую независимость 1952-1971, М., 1976, стр. 19.

¹¹ Լույն տեղում, էջ 20:

¹² Ա. Գրիգորյան, էջ 126:

¹³ P. J. Vatikiotis, *Nasser and his Generation*, New York, 1978, p. 204.

¹⁴ «أريف»، 1998, ص. 2.

¹⁶ Ե. Ա. Արզարյան, Զաղաքական և սոցիալ-տնտեսական վերափոխումները Եգիպտոսի հեղափոխության առաջին փուլում, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XIV, Երևան, 1987:

¹⁸ Sylvia G. Halm, Arab Nationalism: An Anthology, Berkeley and Los Angeles, 1964, p. 48.

¹⁷ Hrair Dekmejian, Egypt Under Nasir: A Study in Political Dynamics, London, 1971.

¹⁸ Thomas Philipp, The Syrians in Egypt 1725-1975, Shtuttgart, 1985, p.148.

¹⁹ Ա. Հովհաննիսյան, էջ 142

²⁰ T. Philipp, The Syrians in Egypt. p. 158.

²¹ Thomas Philipp, "The Copts and Other Minorities in the Development of the Egyptian Nation-State", p. 136.

²² Charles Issawi, "Egypt in Revolution", p. 57.

²³ Ա. Հովհաննիսյան, էջ 144:

²⁴ Gabriel Baer, A History of Landownership..., p. 179.

²⁶ «Պայքար» օրաթերթ, 22 մայիսի 1971:

²⁶ Նույն տեղում, 5 օգոստոսի 1971:

²⁷ Беляев И. И., Примаков Е. М., Египет: время президента Насера, Москва, 1981. стр 143.

²⁸ Ա. Հովհաննիսյան, էջ 147:

²⁹ Charles Issawi, Egypt in Revolution: An Economic Analysis, London, 1963, p. 62.

³⁰ «Ջահակիր», հինգշ., 22 հուլիսի 1965:

³¹ Հայ-Սփյուռք հանրագիտարան, գլխավոր խմբագիր-տնօրեն՝ Հովհ. Այվազյան, Երևան 2003 էջ 154:

³² Հ. Թովուզյան, Եգիպտոսի հայկական գաղութի պատմություն (1805-1952), էջ 238, Ե. Մելքոնյանը 1950-ականներն նրանց հաշվում էր 45000 «ՀԲԸՄ պատմություն», էջ 454:

³³ Ա. Ալպոյաճյան, «ԱՍՀ-ի Եգիպտոսի նահանգը և հայերը, էջ 219:

³⁴ Հ. Թովուզյան, էջ 239:

³⁵ ՀՀ ՀԶԿԾ ԿՊԱ, ֆ. 1, ց. 45, գ. 43, քք. 6-11:

³⁶ Հայ-Սփյուռք հանրագիտարան, էջ 154:

³⁷ «Ջահակիր», 22 հուլիսի, հինգշ., 1965:

³⁸ Նույն տեղում, 29 հուլիսի, հինգշաբթի, 1965:

³⁹ Նույն տեղում, 22 հուլիսի, հինգշաբթի 1965:

⁴⁰ ՀՀ ՀԶԿԾ ԿՊԱ, ֆ. 1, ց. 45, գ. 67, քք. 1-3: